

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության  
Գիտությունների Ազգային Ակադեմիա  
Ինֆորմատիկայի և ավտոմատացման  
պրոբլեմների ինստիտուտի տնօրեն



տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Ասցատրյան

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Ա.01.05 «Հավանականության տեսություն և մաթեմատիկական  
վիճակագրություն» մասնագիտությամբ  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Արշակ  
Գագիկի Մինասյանի «Ռոբաստ գնահատում գաուսյան միջինի  
համար հաշվարկելիության տիրույթում» թեմայով  
ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսության նպատակն է մշակել մեթոդներ՝ ռոբաստ գնահատականներ ստանալու համար աղտոտված նմուշների առկայության դեպքում, ինչպես նաև ստանալ տեսական արդյունքներ ռիսկի վերին սահմանի համար և մշակել արդյունավետ ծրագրեր՝ իրականացնելու ռոբաստ գնահատումը իրական տվյալների վրա:

Ռոբաստ գնահատման խնդիրն առաջին անգամ ուսումնասիրվել է Պ. Հուբերի կողմից 1964 թ.: Վերջին տարիներին աճել է հետաքրքրությունը ռոբաստ (կայուն) գնահատականների հետազոտման նկատմամբ: Ատենախոսությունում քննարկվում է վիճակագրության կենտրոնական հարցերից մեկը՝ գնահատականի կայունությունը, աղտոտված նմուշների առկայության դեպքում: Խնդիրը հատկապես բարդ է բարձր չափանի տարածություններում, որտեղ հայտնի վիճակագրական գնահատականները կիրառելի չեն: Գրականության մեջ հայտնի վիճակագրական օպտիմալ ռոբաստ գնահատականները հաշվարկելի չեն բազմանդամային ժամանակում, որը դարձնում է նրանց կիրառությունը անհնար: Արշակ Մինասյանի ատենախոսության հիմնական արդյունքները լուծում են այս խնդիրը՝ առաջարկելով ալգորիթմ, որն օժտված է վիճակագրական օպտիմալության հատկությամբ, և հաշվարկելի է բազմանդամային ժամանակում: Ստացված արդյունքները կարևոր են ռոբաստ վիճակագրության ոլորտում:

Ինստիտուտում կազմակերպված առցանց սեմինար-խորհրդակցությանը  
ատենախոսության հեղինակ Ա. Մինասյանի մանրամասն զեկուցումից և բազմաթիվ հարցերին  
պատասխանելուց հետո քննարկմանը մասնակցել են Վ. Գ. Սահակյանը  
(Ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ), Մ. Ե.  
Հարությունյանը (Ինֆորմացիայի տեսություն և վիճակագրական մոդելների բաժնի վարիչ,  
ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Ե. Ա. Հարությունյանը (նույն բաժնի գլխավոր  
գիտաշխատող, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Փ. Մ. Հակոբյանը (նույն բաժնի  
գիտաշխատող, ֆիզմաթ. գիտ. թեկնածու), Ա. Օ. Եսայանը (նույն բաժնի գիտաշխատող,  
ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ):

Քննարկման արդյունքում ընդունվեց հետևյալ եզրակացությունը:

Ատենախոսության առավել կարևոր գիտական արդյունքները հետևյալն են.

- Մշակվել է ռոբաստ գնահատման եղանակ, որի հաշվողական ժամանակը բազմանդամային է, իսկ վիճակագրական սխալները՝ օպտիմալ:
- Նախագծվել և մշակվել են երկու գնահատական, որոնց համար հավելված ռիսկը ձգտում է գրոյի, գնահատականներից մեկի համար նաև ապացուցվել է վիճակագրական սխալների կարգը:
- Իրականացվել է թվարկված մեթոդների էքսպերիմենտալ ուսումնասիրություն, ինչպես նաև առաջարկվել են այլ մեթոդներ ռոբաստ գնահատման համար:

Ատենախոսության ներկայացված արդյունքներն ունեն կարևոր տեսական-մաթեմատիկական նշանակություն, իսկ պրակտիկ տեսակետից կարող են օգտագործվել վիճակագրական եղանակների կիրառության ընթացքում բնագիտական, տեխնիկական, բժշկական և տնտեսություն այլ ոլորտներում:

Ատենախոսությունը գերծ չէ նաև որոշ թերություններից, որոնցից ուշադրության են արժանի հետևյալները՝

1. Ներածությունը կրճատ է (1 էջ) բավարար չափով չի ներկայացնում աշխատանքին նախորդող արդյունքների և հեղինակների նշանակությունը:
2. Երրորդ գլխում ներկայացված Հուբերի ֆունկցիայի մինիմիզացիայի ալգորիթմի ուսուցման գործընթացը ցանկալի կլիներ ավելի մանրամասն նկարագրել:
3. Գրականության ցանկում (9 էջ) ցիտված աշխատությունների կեսից ավելին տեքստում չի հիշատակվում, հեղինակների անունները գրված են ամբողջությամբ, այն ինչ պետք է միայն գլխատառերը գրել այն էլ ազգանունից հետո: Որոշ հղումների տվյալները լրիվ չեն:

Նշված թերությունները չեն ազդում ատենախոսության ընդհանուր դրական գնահատականի վրա:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակված երկու գիտական հոդվածներում (Scopus-ում) արտացոլված են ատենախոսության մեջ ներկայացված հիմնական արդյունքները:

Մեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության հիմնական դրույթներին: Հետազոտության թեման և ստացված արդյունքները լիովին համապատասխանում են Ա.01.05 «Հավանականության տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն» մասնագիտությանը:

Արշակ Գազիկի Մինասյանի ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, որը կարող է գնահատվել որպես ռոբաստ գնահատման խնդիրների լուծում հաշվարկելիության տիրույթում: Այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ա.01.05 «Հավանականության տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն» մասնագիտության զծով ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գլխավոր գիտաշխատող,  
Ֆ.մ.գ.դ, պրոֆեսոր

  
Ե. Հայաթյունյան

ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ գիտական ընդհանուր գրասենյակ,  
Ֆ.մ.գ.դ



Շ. Սահակյան